



ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԲՈՂՈՔԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Վեց ամիս է անցել 1957 թվականի դեկտեմբերի 20-ից, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի հրապարակումից, երբ Եկեղեցու և Ազգի առաջ հԱթոռ դատապարտվեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության անունով գործող Անթիլիասի աթոռակալի՝ էջմիածնական թեմերում կատարած եկեղեցական պառակտիչ օտնձգությունները:

Երկար և հետևողական խաղաղասիրական հորդորներից և միասնության կոչերից, հաշտության առաջարկներից, նույնիսկ հանուն համերաշխության կատարված զիջումներից հետո, Վեհափառ Հայրապետը խորունկ մշտով և ծանր սրտով արձակեց Իր պատմական հայրապետական դատավճիռը Անթիլիասի հերձվածի և նրա տխուր դերակատարների մասին: Սպառնալիցին բարի կամեցողության, համերաշխության բոլոր կարելիությունները: Կոնդակում կշռված ձևով և պերճաստ փաստերով ցույց էր տրված Անթիլիասի տաճնապի իսկական բնույթն ու դեհատականը:

Վեհափառ Հայրապետի կոնդակը պաշտոնապես կարգացվեց և ջերմորեն ընդունվեց բովանդակ հավատացյալների կողմից՝ մեր բոլոր եկեղեցիներում: Հայ ժողովուրդը, հայ մամուլը, ազգային-եկեղեցական կազմակերպությունները, համաձայն լինելով Հայրապետի դատավճռին, այն որակեցին

ամեն տեղ «արժան և իրա» և իրենց դատապարտության վճռական խոսքն ասացին, անարգանքի սրունին գամելով Անթիլիասի ողբերգության դերակատարներին, որոնք որոշել են քանդել մեր ազգային-եկեղեցական միասնականությունը, միջազգային շուկաների վրա վաճառել ամեն սրբություն:

Վեհափառ Հայրապետը Իր պատմական կոնդակով ցույց տվեց, որ Մայր Աթոռը իր ամբողջ կարելին արեց, առաջըր առնելու համար եկեղեցական հերձվածի և պառակտման: Հայ Եկեղեցու այսօրվա տագնապի ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Անթիլիասի ուղեկորույնների և նրանց քաղաքական տերերի վրա:

Սփյուռքի հայ հավատացյալ ժողովուրդի հետ միասին, Անթիլիասի ոտնձգությունների դեմ իր բողոքի արդար ձայնը բարձրացրեց նաև մեր ներքին թեմերի հայ հավատացյալ ժողովուրդը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, մեր ներքին թեմերում պաշտոնապես և հանդիսավոր իրադրության մեջ կարգացվեց Վեհափառ Հայրապետի 1957 թվականի դեկտեմբեր 20 թվակիր սրբատառ կոնդակը ի լուր բարեպաշտ ժողովուրդան: Թեմակալ առաջնորդները, առաջնորդական փոխառնորդները հանդես եկան հայրապետական կոնդակի լուսաբանման, նշանակության

մասին բացատրական քարոզներով: Բոլոր թեմերում ինքնաբերական կերպով և հավատացյալների նախաձեռնությամբ կազմակերպվեցին ժողովներ, որտեղ միահամուռ կերպով պաշտպանվեցին Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի ոգին, պատմական նշանակությունը և դատապարտվեցին Անթիլիասն ու նրա ուղեկից մամուլի և մարդկանց ոտնձգություններն ու դավերը, որոնք եկեղեցասիրության կեղծ պիտակի տակ, «հակահամայնավարական պայքարի» շահապաշտ թափանցիկ վարագույրի ներքո, աշխատում են գրավել Ս. Էջմիածնի թեմերը, պառակտել Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքը, սուր բարձրացնել Ս.

Էջմիածնի և Հայրենիքի դեմ, գլուխ բերելու համար վերջնական խզում Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայության միջև:

Հավատացյալների այդ ժողովներն անցան Էջմիածնասիրության, եկեղեցասիրության և հայրենասիրության ջերմ և ինքնաբերական զգացմունքների, դեպի Ս. Էջմիածինը հավատարմության, նվիրման, որդիական անկեղծ և սրտառուչ սիրո և հպատակության մաղթանքների և ցանկությունների տակ: Այդ ժողովներում միահամուռ հավանություն գտան Անթիլիասի ոտնձգությունները դատապարտող ժողովրդական բանաձևեր, հազարավոր հավատացյալների ստորագրություններով:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄ

Նրեանի Ս. Սարգիս եկեղեցում կայացած Արարատյան թեմի բազմամարդ բողոքի ժողովում, հանուն Արարատյան թեմի, Անթիլիասի ոտնձգությունների մասին դատապարտության խոսք ասաց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Կալամտարյանը:

«Անթիլիասի հերձվածքը, — ասաց Տ. Վահան վարդապետը, — քաղաքական մի կուսակցության կողմից ծրագրված, օտարներից քաջալերված և ուղեկորուչս մի շարք

հոգևորականների միջոցով իրագործված մի ձեռնարկ է, որն իր սուր ծայրով տղղված է Հայ Եկեղեցու դեմ, նրա դարավոր ու պատմական կենտրոն Ս. Էջմիածնի դեմ և մեր Հայրենիքի դեմ: Ահա թե ինչու, այսքան հորդորներից հետո, ինչպես նշվել է Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակում, ճեղքվածքը փոխանակ փակվելու, ավելի խորանում է և լաքնանում: Պետք է ետ մղել այն ձեռքերը, որոնք քանդում են մեր դարավոր Եկեղեցին, մեր սուրբ ավանդությունները»:

ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Շիրակի թեմի հավատացյալները, Թեմական խորհուրդը, քահանայից դասը, կենինականի Ս. Աստվածածին եկեղեցում դումարած իրենց 1958 թվականի մարտի 8-ի ժողովում, միաձայն ընդունեցին Անթիլիասի ոտնձգությունները դատապարտող հետևյալ բանաձևը.

«Մենք՝ Շիրակի հայոց Թեմական խորհուրդը, քահանայից դասը և բոլոր հավատացյալները, որ քալլ առ քալլ և սրտատրոփ հետևում ենք սփյուռքահայ եկեղեցական կյանքի ընթացքին, խորապես վշտացած ու վրդովված ենք Անթիլիասի մի խումբ միաբանների եկեղեցավեր և ազգաքանդ գործունեությանը, որը հետզհետե անարգել ծավալվելով, այսօր վտանգավոր հանգամանք է ստանում, ալեկոծելով սփյուռքահայ ազգային-եկեղեցական ողջ կյանքը:

Միանգամայն դատապարտելի է Անթիլիասի ուղեկորույսների անհեռատես և անզիջող կեցվածքը Նորին Ս. Օծուկյուն Ամե-

նայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հաշտարար և շինիչ առաջարկների նկատմամբ:

Մենք հայտնում ենք մեր խորին վրդովմունքը և դատապարտում Տանն Կիլիկիո Կաթողիկոսության անունով գործող Անթիլիասի աթոռակալի անլուր ոտնձգությունները, որովնա փորձում է իր իշխանությունը տարածել Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի մի քանի եկեղեցիների և Սփյուռքի մեր մյուս թեմերի վրա:

Միաժամանակ մենք կոչ ենք անում Մայր Հայրենիքի և ամբողջ աշխարհի ազնիվ ու ճշմարիտ բոլոր հայերին՝ այս բախտորոշ օրերին ի սեր Աստուծո, ի սեր մեր սուրբ հավատի և աստվածակերտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հանուն մեր Եկեղեցու և Ազգի միասնության, հանուն մեր եկեղեցու և Ազգի սպազայի, մեկ մարդու պես համախաձելի մեր հավատի հրեղեն սյուն և հավիտենական սրբություն Ս. Էջմիածնի ու նրա արժանավոր Գահակալի շուրջը և թույլ չտալ մեր Եկեղեցուց ներս

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵՏԻԱՅԻ ԹԵՄ

ո՛չ մի պտուակտում, ո՛չ մի բաժանում, ո՛չ մի ցրվում»:

Վրաստանյոց թեմի հավատացյալների ժողովում ընդունված «Տանն Կրիկիտ Կաթողիվում ընդունված անունով գործող Անթիլիասի աթոռակալին» ռզղված խոսքում գրվել է.

«Նորին Վեհափառություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի 1957 ղեկտեմբեր 20-ին ամբաստանող կոնդակը գալիս է հաստատելու, որ այդ մարդիկ կորցրել են ամեն լըջություն, ու լծվել ազգակործան աշխատանքի, ինչպես մեր նախնիքն են ասել «Գոյնք երեսաց և քայլք տտից յայտ առնեն զմարդ»: Վերջին երկու տարվա ընթացքում Անթիլիասում կատարված աշխատանքները իրենց գույնն ու արտահայտությունը գտան վերջերս Ամերիկայի անջատված եկեղեցիների խնդրում:

Այս բոլորը գողություն է և ազգային աններելի դավաճանություն: Մայր Աթոռը և մենք չենք ընդունում վերոհիշյալ գործարքը և գործարքը կատարողներին դատապարտում ենք ամենալին խստությամբ:

Մենք, Վրաստանի հայերս, այս հեռավոր ափերից սիրո և եղբայրության ողջույններ ենք ուղարկում ձեզ բոլորիդ և կոչ ենք անում, քանի շուտ է և հնարավորություններ կան ձեր սիրո ու եղբայրության ոգով ծածկել բացված անդունդը և այդ անդունդի վրա կոթողել ձեր միասնականու-

թյան ոգին արտահայտող արձան, երեսը միշտ դարձած դեպի ձեր սուրբ Հայրենիքը ու ձեր բոլորի երազները լուսավորող սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Այս սուրբ գործի համար ամենից առաջ մենք բոլորս աղոթում ենք, որ մեր կուսակորիչ Հոր սրբազան լույսը ցույա բոլորի հոգիներում, նամանավանդ լուսավորի մի քանի անառակ որդիներին, որոնք չեն իմանում, թե ինչ են անում:

Չի կարելի սակարկության հանել ազգային սրբությունները, թեկուզ աշխարհի թագավորության խոստումով:

Կոչ ենք անում նաև Անթիլիասի աթոռակալ գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոսին, որ արժանի լինի հարց պատմության և փոխանակ պատմության առաջ խաղանվերու, կարողանա արժանավորների աստիճանին բարձրանալ, թողնելով ամեն տեսակ փառասիրական և այլ նպատակներ և մնալով սոսկ նվիրյալ զինվորը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

Ձոհողությունները որքան մեծ են լինում, այնքան մեծանում է մարդը:

Եղբարք մեր հարազատքի Սիդուս աշխարհի և դու, հայ մարդ, որ անկյունում էլ լինես, այստեղ լսի՛ր քո խանդակաթ մորը, քո ծնողին, քո սուրբ օրբանին, հողի ձայնին, և ո՛վ է այն, որ պիտի ուրանա Երկիրը Հայրենի և Մայր Եկեղեցին»:

ԱԳՐԹԵՋԱՆԻ ԵՎ ԱՆԻՐԿՈՎԿԱՍԻ ԹԵՄ

«Թաքվի հայ հավատացյալները, միաշունչ և միակրոն, իրենց խոր վրդովմունքն ու դայրույթն են հայտնում,— ասվել է մարտի 2-ին, Բաքվի հայոց Ս. Գրիգոր կուսավորիչ եկեղեցու բակում ընդունված բանաձևում՝ Անթիլիասի տոնձգությունների մասին,— որովհետև մեր ժողովուրդը սիրում է Ս. Էջմիածինը: Մեր ժողովրդի համոզումը և հավատամքն է, թե ո՛վ սուր կրարձրացնի

Ս. Էջմիածնի սրբազագաթ փմբեթի դեմ, նրա մեջ անպայման պետք է եղծված լինի Աստուծո պատկերը և հայ ժողովրդի ոգին: Անցյալում, արյուն և արցունք ծծելով կանգուն է մնացել Ս. Էջմիածինը, որովհետև Աստված մեզ հետ է եղել: Այսօր մանավանդ, Ձերդ Ս. Օծուխյան օրոք, անկասկած նորից Աստված մեզ հետ է»:

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԹԵՄ

Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի հայոց միացյալ թեմի և Եկեղեցական Խորհուրդների, քահանայից դասի և համայն հայ հավատացյալ ժողովրդի անունից հետևյալ բողոքի բանաձևն է ընդունվել Անթիլիասի տոնձգությունների դեմ, հավատացյալների ժողովում.

«Մենք մեր ձայնը միացնում և լիովին պաշտպանում ենք Վեհափառ Հայրապետի 1957 թվականի ղեկտեմբեր 20 թվակիր սրբառատ կոնդակը, որն արտահայտում է

նաև մեր թեմի համայն հայ ժողովրդի կամքը և ցանկությունը: Ս. Էջմիածինը եղել է, է և կմնա հայ ժողովրդի Սրբություն Սրբոցը, հայ ազգի փոյունության անխորտակելի պատվարը: Նրա լույսը խորապես արտացոլվում է հայության սրտերում: Ով կհանդգնի այդ լույսը հանգցնել, նա հայ ժողովրդի թշնամին է:

Անթիլիասի եկեղեցական տոնձգությունների առթիվ հայտնում ենք մեր խորին դայրույթը այն մի բուռ հոգևորականների

դեմ, ֆրոնք փառքից կուրացած, մոռցած եկեղեցական ուխտ և կոչում, աշխատում են Սփյուռքում եկեղեցական պառակտում ստեղծել և հայության սիրտը պոկել Ս. Էջմիածնից:

Հայաստանյայց Եկեղեցին հայ ժողովրդի հետ, Ամենայն Հայոց Հայրապետության հովանու ներքո կազմում է մի հոտ և մի հովիվ: Ովքեր վարձկան հովիվների

նման աշխատում են պառակտել այդ միասնական հոտը, դրանք հայ հոգուց, հայ հավատից դատարկված մարդիկ են: Անեծք նրանց շար գործին»:

Բողոքի նմանօրինակ բանաձևեր ստացվել են նաև Մոսկվայի հայ համայնքից, ինչպես նաև ներքին այլ թեմերի մտավորականներից, հասարակական ծանոթ անձնավորություններից:

ՌՈՒՄԻՆԱԼԱՅ ԹԵՄ

Նորին Ս. Օծովյուն Վեհափառ Հայրապետի անունով Բովսարեստից ստացված Բեմական և Ժողական խորհուրդների, Մշակութային տան խորհրդի և համայն հավատացյալ ժողովրդի անունից մայիս 26 թվակիր բողոքի հեռագրում ասվում էր.

«Բուքրեշի ազգային իշխանությունները և հայ հավատացյալները, ունկնդրելով Ջերդ Ս. Օծովյան կոնդակը Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության անցյալի և ներկա վիճակի մասին, բուռն կրողոքեն անթիլիասականներու՝ Հայաստանյայց Եկեղեցվո միասնականությունը խանգարելուն դեմ, նկատելով դիրենք

Հայաստանյայց Եկեղեցվո և հայ ժողովրդի պառակտիչներ: Այս առթիվ վերստին կհայտնենք մեր հավատարմությունն ու սերը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Ջերդ Վեհափառության»:

Հայ ժողովրդի սրտառուչ միասնականություն, արթնամտության և կորովի առաջ կփշվեն ստի, կեղծիքի, զրպարտության բոլոր ամբոցները, կպարտվեն շարության ուժերը և ի վերջո կհաղթանակեն եկեղեցաշեն կանոնը և ազգային առողջ դիտակցությունը:

Ամեն տեղ հայ ժողովրդի սիրտը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ է:

